ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԱԶԳ» ԳԱՂԱՓԱՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓՈՐՁ

Համաշխարհային դասական քաղաքական միտքը բազմիցս եւ բազմակողմանիորեն քննության է ենթարկել **ազգի** գաղափարն ու էությունը: Հայ քաղաքական միտքը եւս փորձել է հարցի վերաբերյալ յուրահատուկ մեկնաբանություններ կատարել: Այս առումով բավականին արժեքավոր ուսումնասիրություն է կատարել Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ, ակնավոր ազգային-պետական գործիչ Հովհաննես Քաջազնունին (1868-1938 թթ.): 1920 թ. Հայաստանի անկախության անկումից հետո հայտնվելով գաղթության մեջ՝ 1923-1924 թթ. Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրի մի քանի համարներում Քաջազնունին հանդես է եկել «Ազգ եւ հայրենիք» հոդվածաշարով[1], որտեղ բազմակողմանիորեն վերլուծում եւ պատմական համեմատությունների է ենթարկում ազգը բնորոշող հատկանիշները: Հոդվածաշարը հետագայում նախ՝ Բեյրութում, ապա՝ Երեւանում լույս է տեսել առանձին գրքով[2]:

Իր ուսումնասիրության հենց սկզբից Քաջազնունին նշում է, որ «ազգ կոչուած հաւաքականութիւնը» այն բարդ գաղափարներից է, որը դժվար է ամփոփել մեկ համառոտ բանաձեւմամբ[3]: Նա փորձում է բարդ հարցադրումներով հասնել իրեն հետաքրքրող խնդրի բացահայտմանը: Ի դեպ, հետազոտման այս սկզբունքը Քաջազնունին հավանաբար վերցրել է ԺԹ. դարի ֆրանսիացի գրող, պատմաբան, արեւելագետ Ժոզեֆ Էռնեստ Ռենանից, որ **ազգ** գաղափարի լավագույն մեկնաբաններից է:

Ըստ Քաջազնունու՝ սովորաբար ընդունված է ազգ համարել այն հավաքական միությունը, որն ամփոփում է միմյանց հետ արյունակցական, ազգակցական կապ ունեցող սերունդներին: Սակայն նա գտնում է, որ «այստեղ «ազգ» գաղափարը պարզապէս շփոթվում է «ցեղ» կամ «տոհմ» գաղափարի հետ»[4]: Նա համոզված է, որ եթե ազգերը բնորոշեն միայն այդ տրամաբանությամբ, ապա շատ վիճելի կլինի ժամանակակից քաղաքակիրթ ազգերի գոյությունը: Հայ գործիչն իր համոզումն ապացուցելու համար բերում է համապատասխան օրինակներ: Նա հարցադրում է, թե որ ազգությանն է պատկանելու անգլիացի հորից եւ ֆրանսիացի մորից ծնվածը, կամ վերջինիցս եւ գերմանուհիպալացուց ծնվածը: Նա նշում է նաեւ ազգակցականորեն իրար հետ կապված եւրոպական տարբեր երկրների թագավորների օրինակները, որոնք տարբեր ազգություններ

1 Տե՛ս **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք» ամսագիր, 1923, մայիս, էջ 83-102, յունիս, էջ 56-64, յուլիս, էջ 69-83, սեպտեմբեր, էջ 75-96, հոկտեմբեր, էջ 100-114, յունուար, էջ 100-114:

2 Տե՛ս **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք, Պէյրութ, 1979, Մատենաշար Զաւարեան Ուսանողական Միութեան, էջ 365. **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք, Երեւան, «Հայրենիք» ակումբ, 2008, էջ 178:

3 Տե՛ս **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, մայիս, էջ 84:

4 Անդ, էջ 85:

էին ներկայացնում: Իր այս հարցադրումներից հետո Քաջազնունին գրում է. «ցեղային կազմը ինքնըստինքեան չի կարող բացատրել «ազգի» էութիւնը եւ առաւել ևս չի կարող սահմանել «ազգ» գաղափարը»[5]:

Քաջազնունին նշում է, որ եւրոպական լեզուների մեջ **ազգ** բառին հաճախ տրվում է պետական իմաստ, ազգը հասկացվում է իբրեւ պետություն կազմող ժողովուրդ, պետության կամ հպատակների հավաքականություն[6] (այսօր այդ ընկալումն ավելի արդիական եւ տիրապետող է դարձել. խոսքը վերաբերում է nation-state գաղափարին): Այստեղ Քաջազնունին բացահայտում է մեկ այլ գաղափարական շփոթմունք: Նա բերում է nation բառի՝ ֆրանսիացիների ընկալումը. «Ֆրանսիացու համար la nation francaise ասել է պարզապէս ֆրանսիահպատակ ժողովուրդ եւ le francais ֆրանսիական հանրապետութեան քաղաքացի: Ազգութիւնը որոշում է պետական պատկանելութիւնով»[7]: Քաջազնունին նշում է, որ բառի այս տրամաբանությամբ մինչեւ 1918 թ. հայ ազգը գոյություն չուներ, ֆրանսիացու համար տաճկահայը le turc էր, ռուսահայը՝ le russe եւ պարսկահայը՝ le persan[8]:

Քաջազնունին բերում է նաեւ հակառակ օրինակը. «Վերսայլի դաշնագրով հիմնադրուած la Lique des Nations-ը իրօք nation-ների (ազգերի) դաշնակցութիւն չէ, այլ պետութիւնների դաշնակցութիւն: Եթէ այդպէս չլինէր, Լիգին չէին մասնակցի Հարաւային Ափրիկէի կամ Զուիցերիական դաշնակցութիւնները, չէին հրաւիրուի մասնակցելու Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, եւ, դրան հակառակ, կը հրաւիրուէին իրլանդացիները, ֆլամանդները, հրեաները, բասկերը, որոնք «ազգեր» են, թէեւ պետութիւններ չեն կազմում»[9]: Այս շփոթմունքի պատճառն այն ենթադրությունն է, թե յուրաքանչյուր ազգ կազմում է մի առանձին պետություն, եւ յուրաքանչյուր պետություն կազմված է մի առանձին ազգից, որը չի համապատասխանում իրականությանը:

Քաջազնունին այս շփոթը պարզաբանելու համար տալիս է մեկ այլ բացատրություն եւս. «...պետական սահմանները անկայուն են, ենթակայ ամէն տեսակ պատահարների ու յանկարծական փոփոխումների, մինչդեռ ազգը շատ աւելի հաստատուն եւ տեւողական երեւոյթ է: Մի պատերազմի ու դաշնագրութեան հետեւանքով (իսկ անցեալում նաեւ վեհապետների ամուսնութեան պատճառով կամ ժառանգական կարգով) պետութեան սահմանները կարող են փոխուել մի օրուայ մէջ, բայց այդ սահմանների մէջ ապրող մարդիկ մնում են ազգայնօրէն նոյնը, ինչ որ եղել են»[10]: Նա նշում է նաեւ անգլիացի պատմաբան Պետեր Գրինի այն միտքը, թե «պետութիւնը պատահական երեւոյթ է, որ հեշտութեամբ կարող է կազմուել ու լուծուել. մինչդեռ ազգը իրականութիւն է, որ ոչ կարելի է շինել, ոչ էլ քանդել»[11]:

5 Անդ, էջ 87:
6 Տես անդ, էջ 88:
7 Անդ:
8 Տես անդ:
9 Անդ:
10 Անդ, էջ 90:
11 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, մայիս, էջ 90:

Իհարկե, ազգերը եւս անսկիզբ չեն եւ չեն կարող հարատեւ գոյություն ունենալ: Սակայն ազգերի առաջացման եւ ոչնչացման գործընթացը շատ դանդաղ է ընթանում: Այլ բան է, որ պետության գոյությունը կամ բացակայությունը կարող են իրենց դրական կամ բացասական ազդեցությունն ունենալ այդ գործընթացի վրա: Սրանով հանդերձ, Քաջազնունին գտնում է, որ այնուամենայնիվ «ազգն ու պետութիւնը տարբեր երեւոյթներ են, ազգային գաղափարն ու պետական գաղափարը՝ տարբեր գաղափարներ»[12]:

Քաջազնունին առաջարկում է նաեւ չշփոթել ազգը ազգաբնակչության կամ ժողովրդի հետ: Խոսքը հատկապես վերաբերում է միեւնույն աշխարհագրական սահմաններում ապրող ազգերին: Օրինակ՝ կարող ենք ասել կովկասյան ազգաբնակչություն, բայց չենք կարող ասել կովկասյան ազգ[13]:

Այնուհետեւ նա մեկնաբանում է մի կարեւոր շփոթմունք եւս: Երբեմն ազգը նույնացվում է կրոնի հետ: «Իրականութեան մէջ չկայ քրիստոնեայ ազգ (կան քրիստոնէութիւն դաւանող տարբեր ազգեր միայն), չկայ բուդդայական ազգ, մահմեդական ազգ, ինչպէս չկան նաեւ կաթոլիկ ազգ, բողոքական ազգ, օրթոդոքս ազգ... Բոլոր հասկացողութիւնների կատարեալ յեղաշրջում կը լինէր, եթէ Բաւարիայի գերմանացուն ազգայնօրէն անջատէինք Բրանդենբուրգի գերմանացիից ու միացնէինք Նորմանդիայի ֆրանսիացու հետ այն պատճառաբանութիւններով, որ երկուսն էլ կաթոլիկ են, իսկ բրանդենբուրգցին լիւթերական է: Կամ Մկրտիչ Խրիմեանին ազգայնօրէն անջատէինք Ղեւոնդ Ալիշանից ու միացնէինք ամբողջովին ռուսացած հանգուցեալ իշխան Աբամելիք Լազարեւի հետ այն պատճառաբանութիւնով, որ երկուսն էլ լուսաւորչական են, իսկ Ալիշանը կաթոլիկ է», - գրում է հայ գործիչը[14]:

Այստեղ նշենք, որ գոնե մեր օրերում նման բացառություններն ակնհայտ են: Էռնեստ Գելները բերում է բոսնիացի մահմեդականների օրինակը. «Բոսնիայի մուսուլմանները, ի վերջո, հասան այն բանին (համառ պայքարից հետո), որ իրավունք ունեն պաշտոնական թղթերում «ազգությունը» տողում գրել «մահմեդական»: Սա չի նշանակում, թե նրանք իրոք հավատում կամ հետեւում են մահմեդական ծեսերին, ոչ էլ նշանակում է, թե իրենց ու մյուս բոլոր մահմեդականներին (նույնիսկ հարավսլավական, օրինակ՝ ալբանացի կամ կոսովոցի) նույն ազգից են համարում: Նրանք սլավոներենի ժառանգ՝ սերբախորվաթական լեզվով էին խոսում, բայց սրանց մշակույթի հիմքը մուսուլմանական է: Նրանց ասածն այն է, որ չեն ցանկանում, որ իրենց համարեն սերբ կամ խորվաթ (չնայած իրենց լեզուն այդ է), քանզի դա կենթադրեր, որ իրենք ուղղափառ են կամ կաթոլիկ: Իսկ հարավսլավացի համարվելն էլ շատ անորոշ մի բան է, ընդհանուր է ու ցեղազուրկ»[15]:

Քաջազնունու հաջորդ դիտողությունը վերաբերում է լեզվին: Նա գրում է, որ «միեւնոյն լեզուով խօսող մարդիկ են, որ կազմում են «ազգ» կոչուած հաւաքականութիւնը»[16]: Սակայն անմիջապես նշում է, որ ազգային միությունը չի սահմանափակվում լեզվական

12 Անդ, էջ 91:
13 Տե՛ս անդ, էջ 92:
14 Անդ, էջ 93:
15 **Գելներ Էռնեստ**, Ազգերը եւ ազգայնականությունը, Երեւան, 2003, էջ 91:
16 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, մայիս, էջ 94:

միությամբ[17]: «Եթէ ազգը լեզու լինէր եւ լեզուն՝ ազգ, ազգագրական քարտէզները ուրիշ կերպ պիտի գունաւորուած լինէին, եւ այնպիսի ազգեր, ինչպիսի են իրլանդացիք, հրեաները կամ վալոնները, պէտք է բոլորովին դուրս ձգուէին քարտէզներից: Բայց դա չէր համապատասխանի գոյութիւն ունեցող հասկացողութիւններին: Մենք չենք տպանում անգլիերէն խօսող նեգրին կամ իրլանդացուն նեգր եւ իրլանդացի անուանել, գերմաներէն խօսող չեխին՝ չեխ, ռուսերէն խօսող հրեային՝ հրեայ, տաճկերէն խօսող վրացուն՝ վրացի, քրդերէն խօսող հային՝ հայ», - գրում է Քաջազնունին[18]: Մերօրյա անգլիացի հետազոտողը նկատել է. «Լեզուն հաճախ ազգության ամենապարզ սիմվոլ է ընկալվում: ...Գերմանական ազգայնականությունը, օրինակի համար, ավանդաբար հիմնադրվել է նույն լեզվի զգացումի վրա՝ առանց որեւէ պարզ ազգային ինքնության հայեցակարգ ունենալու...»[19]:

Այսպիսով, Քաջազնունին եզրակացնում է, որ ցեղը ազգ չէ, ազգը ցեղ չէ, պետությունը ազգ չէ, ազգը պետություն չէ, կրոնը ազգ չէ, ազգը կրոն չէ, ազգը լեզու չէ, լեզուն ազգ չէ: Սակայն այս բոլորը կարող են ազգ կազմող հիմնական տարրերը հանդիսանալ:

Ազգի բնորոշման համար Քաջազնունին կարեւոր տեղ է հատկացնում պատմությանը: «Ազգը պատմական անցեալն է, մի ուրոյն կաղապար, որի մէջ ձուլուել եւ ձեւաւորուել է դարերի կեանքը», - գրում է նա[20]: Նա կարեւորում է այս հանգամանքը եւ նշում, որ ընդհանուր անցյալը պայմանավորում եւ ծնունդ է տալիս հավաքականության՝ «մենք»-ի, «մեր»-ի գիտակցությանը:

Սակայն, ազգն իբրեւ հավաքականություն նկատելիս, Քաջազնունին կոչ է անում չընկնել այլ շփոթմունքի մեջ: Սովորաբար հավաքականությունները ունենում են ընդհանուր կենցաղ, ավանդույթ, սովորույթ: Այս տեսակետից հետաքրքիր են նրա հետեւյալ համեմատությունները. «Փարիզաբնակ ֆրանսիացին իր կենցաղով շատ աւելի մօտ է վիեննաբնակ գերմանացուն, քան նորմանդական գիւղացուն: Կուբանի կոզակը՝ իր սովորութիւններով եւ վարք ու բարքով՝ շատ աւելի մօտ է չերքէզին քան Պերմի նահանգի ռուսին: Կահիեթցի հայը՝ իր նիստուկացով եւ տնտեսութեան ձեւերով՝ շատ աւելի նման է վրացուն եւ սասունցի հայը՝ քուրդին, քան շիրակեցի կամ պոլսեցի հային»[21]: Այսպիսով, հավաքականության զգացումը կարեւոր, բայց ոչ բացարձակ հատկանիշ է ազգին բնորոշելու համար[22]:

Քաջազնունին վերոնշյալ հատկանիշներին հակադրում է ԺԹ. դարի եւրոպացի մտածող Էռնստ Ռենանի այն տեսակետը, ըստ որի «ազգութեան հիմքը՝ ազգայնօրէն

17 Տե՛ս անդ:

18 Անդ:

19 **Andrew Heywood**, նշվ. աշխ., էջ 148:

20 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, մայիս, էջ 97:

21 Անդ, էջ 98:

22 Նույն կապակցությամբ ճապոնական ծագումով ամերիկացի աշխարհահռչակ քաղաքագետ Ֆրենսիս Ֆուկույաման տասնամյակներ անց պիտի գրեր. «Ռուս ազնվականը ավելի ընդհանուր բաներ ունի Ֆրանսիացի ազնվականի հետ, քան՝ իր կալվածքի գյուղացու» (**Fukuyama Francis**, The End of History and the Last Man, New York, Free Press, 2006, p. 269):

մտածելու եղանակն է»[23]: Այսինքն, եթե վերոնշյալ հատկանիշները մարդու՝ որեւէ ազգի պատկանելը կանխորոշում են անկախ նրա գիտակցությունից, կամքից ու ցանկությունից, ապա Ռենանը այն համարում է ինքնագիտակցության եւ ինքնազգացման դրսեւորում: Վերջինս, օրինակ, գրում է, որ ազգը համատեղ ապագան շարունակելու ցանկության դրսեւորում է[24], որը գիտակցաբար է տեղի ունենում: Քաջազնունին, սակայն գտնում է, որ «ազգասէր ու հայրենասէր, ծագումով հրեայ, բայց արդէն ամբողջովին ֆրանսացած» Ռենանի վերոնշյալ համոզումը նաեւ քաղաքական ենթիմաստ ունի: Նա, ըստ Քաջազնունու, դիտավորյալ «մոռացութեան է տուել ազգութիւն կազմող մնացած բոլոր տարրերը եւ ծանրացել է միայն այս մեկի վրայ»[25]:

Իր աշխատանքում Քաջազնունին խոսում է նաեւ ազգի գաղափարի վերաբերյալ ավստրիական սոցիալ-դեմոկրատների տեսակետի մասին: Վերջիններս նույնպես գտնում են, որ ազգի բնորոշումը նախեւառաջ գիտակցական երեւույթ է[26]: Սակայն նա համոզմունք է հայտնում, որ ազգը ոչ միայն քաղաքական, այլեւ մշակութային գործոն է: Այսինքն՝ միայն գիտակցությամբ կամ ինքնագիտակցությամբ սխալ է ազգը սահմանելը: Իր այս պնդումն ապացուցելու համար Քաջազնունին բերում է հետեւյալ օրինակը. «Հայը կարող է անկեղծօրէն ընդունել մահմեդականութիւն, կարող է դառնալ շատ ջերմեռանդ, խորը հաւատացող, իսկական ու կատարեալ մուսուլման. բայց երբեք չի կարող դառնալ թուրք կամ արաբ: Սա արդէն ազատ ընտրութեան, կամքի ցանկութեան ու համոզմունքի խնդիր չէ, այլ մի ուրիշ բան՝ շատ աւելի խորն ու արմատական: Հայը՝ իբրեւ քաղաքական միաւոր՝ կարող է չէզոքանալ, մոռանալ կամ հարաժարուել իր հայութիւնից, իրացնել քաղաքական իդէալներ, որ պատկանում են մի ուրիշ ազգութեան. կարող է նոյնիսկ դաւաճանել իր ազգին, անցնել հակառակորդի կողմը: Բայց՝ չէզոք թէ դաւաճան, անտարբեր թէ թշնամի, թրքական լրտես թէ աշխարհաքաղաքացիութեան առաքեալ՝ նա դարձեալ կը մնայ հայ»[27]:

Մեր կարծիքով այս համոզմանը պետք է վերապահումով մոտենալ:

Այս հարցադրումներից հետո Քաջազնունին փորձում է հակառակ տեսանկյունից մեկ առ մեկ քննել այն հատկանիշները, որոնք բնորոշում են ազգը:

Առաջինը նա խոսում է ցեղային, արյունակցական կապի, ծագման մասին[28]: Ըստ այդմ՝ միայն ցեղային միությամբ հնարավոր չէ որեւէ հավաքականության ազգ անվա-

23 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, մայիս, էջ 99:

24 Տե՛ս **E. Renan**, Qu'est-ce qu'une nation?- Marseille: Le Mot et le Reste, 2007, էջ 34:

25 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», էջ 100:

26 Տե՛ս անդ, էջ 101:

27 Անդ, էջ 102:

28 Մեր օրերում անգլիացի կին պրոֆեսոր, ազգայնականության գաղափարախոսության հայտնի մասնագետ Մոնտեսանտ Գուիբեռնաուն ազգերին բնորոշելիս կարեւորում է նրանց ծագումը եւ ընդհանրացնում է հետեւյալ երկու մատնանշումները. «Ազգերի ծագումը ազգայնականության գաղափարախոսության եւ մասնավորապես նրա քաղաքական ենթատեքստի առավել վիճելի հարցերից է: Գոյություն ունեն երկու հիմնական տեսակետ. առաջինը ենթադրում է, որ ազգը բնական է, երկրորդը նախապատվությունը տալիս է ազգի եւ ազգայնականության ժամանակակից երեւույթ լինելուն: Իմ կարծիքով երկու ենթադրություններն էլ լիարժեք չեն» (**Montserrat Guibernau,** Nationalisms: The Nation-State and Nationalism in the Twentieth Century, Cambridge, Polity Press,1996, p. 49):

նել, սակայն «ցեղը՝ ազգ կազմող հիմնական գարբերից մեկն է»[29]: Միաժամանակ հեղինակը չի բացառում, որ որեւէ ազգի ներկայացուցիչը արյունակցական կապեր չունենա մյուս ազգակիցների հետ, սակայն դրանք շատ հազվադեպ կարող են լինել:

Հաջորդ կարեւոր բնորոշումը պետության առկայությունն է: Այստեղ եւս որոշ բացառիկ դեպքերի մասին խոսելով՝ Քաջազնունին կարեւորում է պետության դերը ազգի սահմանումը տալու համար: Ինչպես արդեն նշեցինք, նա պետությունն ու ազգությունը տարբեր երեւույթներ է համարում: Ազգը կարող է գոյություն ունենալ (թեկուզ ժամանակավորապես) առանց պետության, կարող է բաժանված լինել տարբեր պետությունների միջեւ, ինչպես եւ պետությունը կարող է կազմված լինել տարբեր ազգերից: Սակայն ազգը ավելի հիմնական, հարատեւ ու արժեքավոր երեւույթ է, քան պետությունը: «Պետությունները յաճախ կազմւում են ու լուծւում յանկարծակի, քաղաքական պատահարների հետեւանքով ու արհեստական միջոցներով. մինչդեռ ազգը կազմելու կամ լուծելու համար՝ հարկաւոր է դարերի ու սերունդների աշխատանք», - գրում է Քաջազնունին[30]: Նա ընդգծում է մի կարեւոր հանգամանք եւս. ազգերին դեպի ինքնուրույն պետական կյանք մղում է ինքնապահպանման բնազդը, որովհետեւ սեփական պետականությունը ազգի գոյության կամ, առնվազն, անվտանգության անհրաժեշտ պայմաններից մեկն է[31]:

Քաջազնունին այնուհետեւ գրում է. «Ազգայնօրէն կազմակերպուելու, ինքնահաստատուելու, զարգանալու, յառաջադիմելու եւ լրիւ արտայայտուելու համար՝ ազգ կազմող մարդիկ պէտք է ունենան իրենց Հայրենիքը»[32]: Ընդ որում նա կոչ է անում այս առումով ծննդավայրը հայրենիք չհամարել: Ճիշտ է, ծննդավայրը եւս հայրենիք է, հայրենիքը ներառում է նաեւ աշխարհագրական, պատմական, ժողովրդագրական, ծագումնաբանական ընկալում, սակայն ազգերի համար հայրենիքը առավելապես պետք է քաղաքական գաղափար լինի: Մի բան, որ պակասել է հայության ընկալումներում, եւ որի մասին ցավով նշում է Քաջազնունին: «Ազգի համար Հայրենիքը - ազգային Պետութիւն է», - եզրակացնում է նա[33]:

Կրկին, եզակի բացառություններով, ազգը բնորոշելու համար Քաջազնունին կարեւորում է նաեւ աշխարհագրական որոշակի տարածքի, երկրի առկայությունը, որովհետեւ երկիրն անհրաժեշտ է պետություն կազմելու եւ ազգը պահպանելու համար: Խնդիրն այն է, որ ազգը բնորոշող ազգային արժեքներ ստեղծելու համար կարեւոր է հավաքական աշխատանքը, փոխգործակցությունը, որն ավելի արդյունավետ է լինում մշտական սերտ շփումների դեպքում միայն, իսկ դրա համար «հարկաւոր է ամէնից առաջ ֆիզիքական մօտիկութիւն, այսինքն՝ երկրային միութիւն»[34]:

29 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, յունիս, էջ 59:

30 Անդ:

31 Այս տեսակետից հետաքրքիր եւ տեղին է մերօրյա հրեա պատմաբան Շլոմո Զանդի հետեւյալ միտքը. «Ազգերի կազմավորումը ժամանակակից էրապում տեղի ունեցավ ազգային գաղափարախոսությունների ձեւավորմանը զուգընթաց: Առանց ազգայնականության եւ նրա քաղաքական եւ ինտելեկտուալ գործիքների ազգերի ի հայտ գալը անհնարին կլիներ, եւ բնականաբար, անիմաստ կլիներ ազգային պետությունների ձեւավորումը» (**Ш. Занд**, նշվ. աշխ., էջ 105):

32 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք, Մատենաշար Զաւարեան Ուսանողական Միութեան, էջ 297:

33 Անդ, էջ 300:

34 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, յունիս, էջ 61:

Ազգին տրվող մյուս բնորոշիչը Քաջազնունին համարում է կրոնը: Ճիշտ է, կրոնական միությունը ազգային միություն չէ, սակայն ազգությունը նկարագրող կարեւոր տարրերից մեկը համարվում է կրոնը: «Դաւանանքն ու դաւանական կազմակերպութիւնը՝ եկեղեցին խաղացել են ազգերի պատմութեան մէջ (ու դեռ այսօր էլ շարունակում են խաղալ) շատ կարեւոր դեր եւ կրօնը պէտք է համարել՝ որոշ վերապահումներով ազգային խոշոր յատկանիշներից մեկը, - գրում է հայ ականավոր գործիչը եւ շարունակում, - ազգերը գունաւորում են հաւատքը իրանց սեփական գոյներով, եւ երբ ազգայնացած հաւատքը հաստատուած է, նա ինքը արդէն գունաւորում է ազգերը իր գոյներով»[35]: Ի դեպ, շատ հետաքրքիր է ու առարկայական այս կապակցությամբ արտահայտված միտքը եւս. «Դաւանանքը՝ ինչ ծագում էլ այն ունենայ, որտեղից եւ ինչպէս էլ այն ներմուծուած լինի՝ անխուսափելիօրէն ազգայնանում է ժամանակի ընթացքում եւ ազգայնանալուց յետոյ ինքը դառնում է ազգային տարր»[36]:

Այստեղ Քաջազնունին խոսում է նաեւ առկա գիտակցական եւ անգիտակցական թյուրըմբռնումների մասին: Օրինակ՝ նա տգիտություն կամ գաղափարական միտումնավոր շփոթում է համարում թուրք որոշ հրապարակախոսների շրջանառության մեջ դրած «մուսուլմանական ազգ» արտառոց արտահայտությունը[37]:

Անդրադառնալով հայ ազգը բնորոշելու գործում կրոնի դերին՝ Քաջազնունին ընդգծում է լուսավորչական հավատքի դերը, չնայած որ հայ ազգն ունեցել է Ղեւոնդ Ալիշանի եւ Մկրտիչ Պեշիկթաշլյանի նման լուսավոր դեմքեր, որոնք կաթոլիկ էին:

Ոչ լուսավորչական դավանանքը, որ օտար էր հայի համար, դարերի ընթացքում Թուրքիայի հայ կաթոլիկներին եւ հայ բողոքականներին հեռու է պահել հայ ազգային-ազատագրական շարժումներից: «Այդ շարժումները բացարձակապէս ազգային-քաղաքական էին, չունէին ոչ մի առընչութիւն դաւանական բաժանումների հետ. բայց եւ այնպէս, ոչ լուսաւորչական հատուածները բռնել էին չէզոք, նոյնիսկ անբարեացակամ հանդիսատեսների դիրք», - նկատում է Քաջազնունին[38]: Նա բերում է նաեւ հրեաների օրինակը՝ նշելով, որ հրեությունը որպես ազգ պահպանվելու գործում պետք է մեծապես երախտապարտ լինի նաեւ մովսեսական օրենքին, որ դարեր ի վեր եղել ու այսօր էլ մնում է նրանց ազգային կրոնը[39]:

Ազգը բնորոշող ամենակարեւոր բաղադրիչը Քաջազնունին համարում է լեզուն: «Ազգը կազմւում է այն ժամանակ ու այնտեղ միայն, երբ եւ ուր կան արդէն մշակութային հարստութիւնների բաւարար պաշարներ: Այդ հարստութիւններից ամենէն արժէքաւորը, ազգութեան տեսակէտից, լեզուն է: Լեզուի կազմակերպումը ազգի ծագման վճռական վայրկեանն է. լեզուի ինքնահաստատումը ազգի ինքնահաստատումն է», - գրում է նա[40]:

35 Անդ, էջ 61-62:
36 Անդ, էջ 62:
37 Վերեւում նշվեց բոսնիացի մահմեդականների բացառիկ օրինակը:
38 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, յունիս, էջ 63:
39 Անդ, էջ 64:
40 Անդ, էջ 70:

Լեզուն ոչ միայն ծնում, այլեւ ապրեցնում է ազգը: Ազգը կենդանի է իր լեզվով: Լեզվի մահը ազգի մահն է, ինչպես որ ազգի մահը լեզվի մահն է:

Ազգը բնորոշելու գործում լեզվի արժեքը կարեւորելու համար Քաջազնունին գրում է, որ ազգային պայքարը առավելապես լեզվական պայքար է: Այս կապակցությամբ նա նշում է. «Երբ մի զօրեղ ազգ ուզում է կլանել իրանից թոյլերին, ամէնից առաջ յարձակւում է լեզուի վրայ: Եւ երբ վտանգի ենթարկուած ազգը ուզում է պաշտպանել իրան, ամէնից առաջ պատսպարում է լեզուն: Լեզուն ու լեզուի հետ անմիջապէս կապուած դպրոցը, գրականութիւնը, մամուլը, թատրոնը, - ահա ազգային միջնաբերդը, ահա ազգային վէճերի, յարձակման ու դիմադրութեան, գլխաւոր նիւթը»[41]:

Հովհ. Քաջազնունին բերում է նաեւ պատմության մեջ հայտնի բացառությունները, երբ լեզուն կորել է եւ ազգը պահպանվել, կամ ազգը կորել է, իսկ լեզուն՝ պահպանվել: Խոսքը վերաբերում է հրեական ազգին եւ լատիներեն լեզվին: Լեզվի դերի անտեսումով հանդերձ, հրեաները դարերով պահել են իրենց ազգային դեմքը, որը Քաջազնունին բացատրում է նրանով միայն, որ «միւս ազգային տարրերը - ցեղային կապը, անցեալի հարուստ յիշողութիւնները, եզակի պատմութիւնը, հալածական վիճակը եւ մանաւանդ մեկուսացած ու անխորտակելի ձեւերի մէջ ձուլուած ազգային եկեղեցին եղել են չափազանց զօրեղ: Միմիայն հրէական ազգի արտակարգ, անօրինակ կենսունակութիւնն է, որ կարողացել է դիմադրել լեզուի կորստին, որեւէ ուրիշ ազգ վաղուց արդէն անհետացած պիտի լինէր»[42]:

Ֆուկույաման եւս գրում է, որ ազգերը հիմնականում հիմնված են լեզվային բաժանման վրա[43]: Նա բերում է միջինասիական ազգերի՝ ուզբեկների, ղազախների օրինակը, որոնք մեր օրերում միմյանցից տարբերվելու, ինքնուրույն երեւալու համար փորձում են պատմական լեզուներ եւ մշակույթներ «վերաբացել»[44]:

Ազգի հատկանիշներից է նաեւ ընդհանուր անցյալը, պատմությունը: Քաջազնունին այս առումով գրում է. «Պատմութիւնը անբաժանելի մասն է ազգից, - անբաժանելի այն պարզ պատճառով, որ ազգը էապէս պատմական երեւոյթ է. աւելին եւս, ազգը՝ ինքը պատմութիւնն է, նրա մարմնացումը»[45]: Անցյալի գիտակցումը, առավել եւս՝ ընդհանուր անցյալի գիտակցումը ազգի գոյության հիմնական պայմաններից մեկն է:

Քաջազնունին ազգային գիտակցությունը համարում է ընդհանուր անցյալի գիտակցություն: Ազգ երեւույթը անհատներին միացնում է ոչ միայն տարածության, այլեւ ժամանակի մեջ: «Պատմութիւնն է, որ ինձ հայ է արել եւ պատմութիւնն է, որ պահում է ինձ հայ, կապում է ազգայնօրէն ուրիշ հայ մարդկանց հետ՝ ժամանակի ու տարածութեան մէջ», - ասում է նա[46]:

Նույն տրամաբանությանը Է. Renանը տալիս է մեկ այլ ձեւակերպում, ըստ որի՝

41 Անդ, էջ 73:
42 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, յուլիս, էջ 71:
43 Տե՛ս **Fukuyama Francis**, նշվ. աշխ., էջ 269:
44 Անդ:
45 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, յուլիս, էջ 75:
46 Անդ, էջ 76:

հիշողությունների հարուստ ժառանգության ընդհանուր տնօրինությունը ազգը կազմող կարեւոր ոգին է[47]: Մերօրյա հետազոտողներից անգլիացի Անտոնի Դ. Սմիթն իր հերթին այս կապակցությամբ գրում է. «Էթնիկական ամբողջությունը մարդկանց խումբ է, որն ունի ընդհանուր նախահայրերի մասին առասպելներ, ընդհանուր պատմական հիշողություն»[48]:

Քաջազնունին ազգը բնորոշում է նաեւ ուրույն կենցաղով: «Անշուշտ, կենցաղը այնպիսի մեծ արժէքի ազգային տարր չէ, ինչպիսին է օրինակ լեզուն, բայց եւ այնպէս, նա ունի իր որոշ տեղն ու նշանակութիւնը ազգ կազմող միւս տարրերի մէջ», - գրում է նա[49]:

Ազգի բնորոշիչներից է նաեւ ինքնագիտակցությունը: Ազգային գիտակցություն ասելով՝ Քաջազնունին հասկանում է «գիտակցել այն կապերը, որ կապում են անհատին ազգային հաւաքականութեան հետ. գիտակցել այդ հաւաքականութեան շահերը. գիտակցել այն հաւաքականութեան շահերը, կարիքներն ու իրաւունքները. գիտակցել, թէ ինչ բարիքներ է ստանում եւ ունի ստանալու անհատը հաւաքականութիւնից եւ թէ ինչ պարտականութիւններ ունի ինքը՝ հանդէպ հաւաքականութեան»[50]: Ըստ մեր հեղինակի՝ առանց այդ գիտակցության ազգը կայացած չի կարող համարվել[51]:

Քաջազնունին կարեւորում է նաեւ առողջ ազգային գիտակցության եւ ազգայնամոլության՝ շովինիզմի տարբերակումը: Այս երկուսին նա տալիս է հետեւյալ տիպիկ բնորոշումը. «Ազգային գիտակցութիւնն ու սրանից անհրաժեշտօրէն բխող ազգասիրութիւնը - ազգերի ֆիզիոլոգիան (բնախօսութիւնը) է, առողջ կեանքի հետեւանք ու պայման: Շովինիզմը - նրանց պատոլոգիան - հիւանդաբանութիւն է, հիւանդ վիճակի արտայայտութիւն»[52]: Իսկապես, շովինիզմը բացասական երեւույթ է ոչ միայն ազգամիջյան փոխհարաբերությունների եւ մարդկային համակեցության տեսակետից, այլեւ զուտ ազգային կյանքի համար: Ընդհակառակը՝ ապրելու եւ բարգավաճելու համար ազգերը կարիք ունեն փոխադարձ օգնության: Մարդկությունն ինքը ազգերի հավաքականություն է: Իսկ շովինիզմը, ըստ Քաջազնունու, անկարելի է դարձնում կամ շատ է դժվարացնում ազգերի համակեցությունը՝ դրանով իսկ վնասելով ազգային շահերին: Ավելին՝ ազգերի մրցակցությունը, որն ամենեւին չի հակասում համագործակցության սկզբունքին, պետք է բնական եւ շատ օգտակար համարել:

Սակայն, Քաջազնունին գտնում է, որ ազգերը գիտակցորեն չեն կազմվում: Գիտակցությունը պարզապես կատարված փաստի հետեւանք է: Գիտակցությունն ի հայտ է եկել այն ժամանակ, երբ ազգային առարկայական տարրերը գոյություն են ունեցել: Գիտակցությունն ուղղակի ազգի կառուցվածքը դարձրել է ավելի ամբողջական[53]:

47 Տե՛ս **E. Renan**, նշվ. աշխ., էջ 101:

48 **A. D. Smith**, The Ethnic Revival. - Cambridge: Cambridge University Press, 1981, p. 66.

49 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, յուլիս, էջ 79:

50 Անդ, էջ 80:

51 Է. Գելները շատ է կարեւորում ազգային գիտակցության հանգամանքը որպես ազգի բնորոշիչ: «Երկու անձ նույն ազգից են միմիայն այն դեպքում, եթե իրենք համարում են, որ նույն ազգից են, - գրում է նա եւ շարունակում, - հենց այն փաստը, որ նրանք համարում են, որ... մի ընկերակցության անդամ են, նրանց դարձնում է ազգ. մնացած ընդհանուր հատկանիշները, ինչպիսին էլ լինեն դրանք, ազգի անդամներին չեն բաժանում այլազգիներից» (**Էռնեստ Գելներ**, նշվ. աշխ., էջ 16):

52 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, յուլիս, էջ 81:

53 Տե՛ս անդ, էջ 83:

Այսպիսով, Քաջազնունին սկզբից փորձում է յուրահատուկ հարցադրումներով բացահայտել ազգը բնորոշող հատկանիշները, որից հետո տարբեր տեսանկյուններից մեկնաբանում է դրանք: Ամփոփելով իր փաստարկումները՝ նա ազգ համարում է մարդկային այն յուրատիպ խումբը, որի անդամներն իրար հետ կապված են ծագումով, ընդհանուր պետությամբ, կրոնով, լեզվով պատմությամբ, կենցաղով[54]:

Ի դեպ, մոտավորապես նման ընդհանուր բնութագրում է տալիս նաև Ի. Ստալինը. «Ազգը մարդկանց պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրությունն է, որ ծագել է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և կուլտուրական ընդհանրության մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրության բազայի վրա»[55]:

Իր աշխատանքի հաջորդ մասում Քաջազնունին անդրադառնում է նաև ազգի ու ընկերվարության գաղափարների թվացյալ հակասությանը, թե իբր ազգայնականն ընդդիմադիր է տրամադրված ընկերվարականին և հակառակը: Մինչդեռ իրականում ընկերվարական գաղափարախոսությունն ազգի գոյության լավագույն պաշտպաններից է: «Եթէ սոցիալիստական վարդապետութիւնը ըմբռնելու լինենք իր լայն ու բովանդակ իմաստով - կը տեսնենք, որ սոցիալիստը ոչ միայն չի հանդիսանում ազգութեան թշնամի կամ հակառակորդ, այլ ամէնից անկեղծ, ամէնից աւելի համոզուած ու հաւատարիմ պաշտպան. ազգերի ազատագրումը, ինքնորոշուելու իրաւունքը և ինքնահաստատուելու միջոցների ապահովումը - սոցիալիստական պահանջներից մէկն է», - գրում է Քաջազնունին[56]:

Քաջազնունին փորձում է բացահայտել նաև այդ թյուրիմացության պատճառը: Հայտնի է, որ սոցիալիստական շարժումներն առաջացան այնպիսի երկրներում, որտեղ դասակարգային պայքարի համեմատությամբ ազգային պայքարը երկրորդական նշանակություն ուներ: «Հասկանալի է միանգամայն, որ գերմանական, բելգիական, ֆրանսիական կամ անգլիական պրոլետարիատը շատ էլ մտահոգուած չի եղել ազգային խնդիրներով. այդ խնդիրները ունեցել են նրա համար աւելի տեսական, քան կենսական նշանակութիւն, որովհետև ինքը ազգայնօրէն զրկուած կամ վտանգուած չի եղել երբէք», - գրում է Քաջազնունին[57]: Այլ բան տեղի ունեցավ, երբ սոցիալիստական շարժման մեջ հետագայում ներգրավվեցին նաև բազմազգ կայսրությունների ճնշված ժողովուրդների ներկայացուցիչներ: Վերջիններս արդեն առավել կտրուկ էին բարձրացնում իրենց սոցիալական խնդիրները՝ նշելով, որ սոցիալական չարաշահումը արդյունք է նաև իրենց ազգային պատկանելության: Քաջազնունին միաժամանակ մատնանշում է, որ չնայած ազգային և սոցիալիստական շարժումները կարող են օժանդակել միմյանց, այնուամենայնիվ դրանց նույնացումը երբեք չի կարող տեղի ունենալ[58]:

Վերոնշյալ ընկալումներից և ընդհանրացումներից զատ իր աշխատանքի մեկ այլ հատվածում Քաջազնունին տալիս է «ազգ»-ի մի կարևոր և ընդհանրական բացատ-

54 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, էջ 79:
55 **Ի. Վ. Ստալին**, Մարքսիզմը եւ ազգային հարցը. Երկեր, հ. 2, Երեւան, 1947, էջ 346:
56 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, էջ 94:
57 Անդ:
58 Տե՛ս **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, էջ 69:

րություն. «Ազգը - մշակոյթ է: Ազգի կորուստը - մի ուրոյն մշակոյթի ու ամէնից առաջ մի ուրոյն լեզուի կորուստ է: Իսկ լեզուի կորուստը - գրականութեան կորուստ է, այսինքն՝ մտածելու, զգալու եւ արտայայտուելու մի յատուկ ձեւի կորուստ: Կորցնելով այս կամ այն ազգութիւնը, մարդկութիւնը կորցնում է մշակութային տիպերից մէկը, մարդկութիւնը աղքատանում է»[59]:

Քաջազնունին գրում է, որ մշակոյթի զարգացումը մեծապես պայմանավորված է բազմազանությամբ եւ բազմազանության ներդաշնակությամբ: Իսկ ազգերը մարդկության բազմազանության արտահայտությունն են: Հետեւաբար, ազգերի վերացումը հեռադիմական երեւույթ է:

Մշակոյթի վերացումը հեռադիմական երեւույթ է: Հայ ազգային մշակոյթի կորուստն էլ համամարդկային մշակոյթի կորուստ է, համամարդկային գործող օրգանիզմի թուլացում:

Այստեղից Քաջազնունին հետեւություն է անում, որ «Ազգերի պահպանումը - մշակութային տեսակների պահպանումն է»[60]: Այս առումով տեղին է նշել Է. Գելների հետեւյալ միտքը. «Կա ազգը սահմանելու մի ուրիշ հարուստ հնարավորություն, ինչը հիմնված է մշակութային ընդհարության վրա: Մարդկության պատմությունը եղել ու մնում է լի մշակութային զանազանություններով»[61]: Ազգայնականության մեկ այլ հայտնի տեսաբան Դ. Ալտերն այս տեսակետից ազգերը բաժանում է երկու խմբի՝ մշակութային եւ քաղաքական[62]:

Հետաքրքիր եւ արժեքավոր են Քաջազնունու մտորումներն ու եզրահանգումները ազգը որպես «պատմամշակութային դաս» որակելու առումով: Նախ նա գրում է, որ ազգն անընդհատ զարգացման գործընթացի մեջ է, եւ զարգացման դադարեցումը նշանակում է, որ ազգը կամ մահանում է, կամ դատապարտվում է մահվան[63]: Այստեղ Քաջազնունին ամենեւին ի նկատի չունի ֆիզիկական մահը: Եթե ազգերը անմահ չեն եւ այնուամենայնիվ վաղ թե ուշ դատապարտված են մահվան, ապա ազգություն երեւույթը, ըստ Քաջազնունու, հավերժ է : Մեռնող կամ մեռած ազգերին փոխարինում են նորերը[64]: Նույնը տեղի է ունենում պետությունների պարագայում:

Ազգը համարելով քաղաքակրթության ձեռքբերում՝ Քաջազնունին գրում է. «Քաղաքակրթութիւնը չի տանում դէպի ապազգայնացում: Մինչեւ հիմա եղել է հակառակը (այսինքն՝ քաղաքակրթութեան հետ զուգընթաց զօրեղացել են նաեւ ազգային անհատականութիւնները) եւ պատճառ չկայ ենթադրելու, թէ ապագայում այլ կերպ է լինելու», - գրում է նա[65]:

Հովհ. Քաջազնունին ՀՅԴ-ից դուրս գալուց հետո իր գաղափարներով ավելի հակվեց դեպի անարխիզմ (անիշխանականություն): Նրա աշխատանքի վերջին մասը գրվել

59 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1924, յունուար, էջ108:
60 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք, Մատենաշար Զաւարեան Ուսանողական Միութեան, էջ 296:
61 **Էռնեստ Գելներ**, նշվ. աշխ., էջ 71:
62 Տե՛ս **Peter Alter**, Nationalism, London, Arnold, 1996, էջ 8-11:
63 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, էջ 82:
64 Տե՛ս անդ, էջ 83:
65 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք. «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, էջ 69:

է այդ շրջանում: Հետաքրքիրն այն է, որ Քաջազնունին չհերքելով անարխիզմի գաղափարի վերջնական հավանական հաղթանակը, համոզված է, որ դեռ երկար ժամանակ պետությունն է լինելու ազգի հայրենիքը: Ահա թե ինչ է գրում. «Անհերքելի է, սակայն, որ անիշխանական ապագայի հնարաւորութիւնները ենթադրում է այնպիսի խոր, այնպիսի արմատական փոփոխութիւններ թէ մարդու անհատական հոգեբանութեան եւ թէ գոյութիւն ունեցող ընկերային փոխյարաբերութիւնների մէջ, որ պետութիւնների իրաւասութեան աստիճանական սահմանափակումը կատարւում է շատ դանդաղօրէն եւ ի սպառ վերացումը պահանջելու է շատ երկար ժամանակ: Եւ ինչ հեռանկարներ էլ գուշակի կամ ծրագրի ապագայի համար անիշխանականը, անհերքելի է, որ պատմական ներկայ շրջանում պետութիւնն է - ու միայն պետութիւնը - որի մէջ կարող է մարմնանալ գէթ մասամբ - քաղաքացիի ու ազգի Հայրենիքը»[66]:

Եւ ազգերը, ընդունելով դա, գիտակցում են, որ ազգայնորեն ապրելու համար պետք է ունենալ հայրենիք, «մի տուն, մի անկիւն, ու կարողանան կենտրոնացնել իրենց ստեղծագործական կարողութիւնը եւ ազատօրէն կարգաւորել հասարակական կեանքը - ուրիշ խօսքով՝ պէտք է կազմեն Ազգային Պետութիւն»[67]: Իսկ պետության կազմությունն անհրաժեշտ է այն պարզ պատճառաբանությամբ, որ դեռեւս ուրիշ որեւէ հաստատություն չի կարող ապահովել ազգերի ազատ եւ անկաշկանդ զարգացումը: «Եթէ ազգը չի կազմում պետութիւն, եթէ չունի իր տրամադրութեան տակ պետական միջոցներ, անյաղթելի դժուարութիւնների է հանդիպում յառաջադիմութեան ճամբի վրայ: Եւ ուրիշ ոչ մի կազմակերպութիւն չի կարող փոխարինել պետութեանը, որովհետեւ ուրիշ ոչ մի կազմակերպութիւն չի կարող ունենալ պետութեան իրաւասութիւնն ու կարողութիւնը», - շարունակում է Քաջազնունին[68]:

Քաջազնունին մատնանշում է նաեւ պետության վտանգը այլ ազգերի զարգացումը սահմանափակելու տեսակետից[69]: Սա այն դեպքում է, երբ ավելի փոքր կամ տկար ազգը ապրում է ավելի մեծ կամ զորեղ ազգի հետ մեկ պետության մեջ: Բնականաբար, այստեղ խոսքը ազգային պետության մասին չէ: Սակայն Քաջազնունին գրում է, որ պետությունը ազգային հայրենիք լինելուց զատ նաեւ «ու շատ խոշոր չափերով - տնտեսական, քաղաքական ու ռազմական կազմակերպութիւն է»[70]:

Սակայն Քաջազնունին պետությանը մոտենում է միայն ազգային տեսակետից, որովհետեւ իր խնդիրը պետության մեջ Ազգի Հայրենիքը գտնելն է: Իսկ թույլ ազգերի պարագային նա չի բացառում պետության դաշնային ձեւի որդեգրումը: «Դաշնակցելու սիստեմը, որ հնարաւորութիւն է տալիս կիրառել «ինքնորոշման» սկզբունքը՝ ապահովելու լաւագոյն միջոցն է, իսկ փոքր ու տկար ազգերի համար յաճախ նաեւ միակ կարելին», - գրում է նա[71]:

---

66 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք, Մատենաշար Զաւարեան Ուսանողական Միութեան, էջ 300:
67 Անդ, էջ 304:
68 Անդ, էջ 305:
69 Տե՛ս անդ, էջ 306:
70 Անդ, էջ 329:
71 Անդ, էջ 350:

Բայց դաշնակցելու կարիք ունեն ոչ միայն թույլ եւ փոքր, այլեւ մեծ եւ հզոր ազգերը: Նա պատահական չի համարում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի նման գերտերությունների կողմից դաշնակիցներ փնտրելը: Դաշնակիցներ ձեռք բերելը ենթադրում է ուժերի տնտեսում, որում շահագրգռված են բոլոր պետությունները: Այս տրամաբանությամբ դաշնակցելու սկզբունքի որդեգրումը կարող է հանգեցնել համամարդկային դաշնակցության: Այս դեպքում եւս Քաջազնունին չի մտահոգվում ազգերի գոյության ապագայով, չնայած որ Համաշխարհային պետական դաշնակցության ստեղծումը արդեն ենթադրում է պետությունների բացասում[72]:

Զարգացնելով իր միտքը՝ Քաջազնունին գրում է, որ եթե այսօր ազգերի գոյությունը հնարավոր չէ առանց պետության, դա չի ենթադրում, որ ապագայում եւս ազգն ու պետությունը անբաժանելի հասպատություններ են: «Սրանց սերտ կապակցութիւնը հետեւանք է միայն քաղաքական որոշ պայմանների, որոշ կացութեան: Տարբեր պայմանների մէջ կապը կարող է թուլանալ կամ ի սպառ վերանալ, որովհետեւ ըստ էութեան տարբեր բնոյթի ու տարբեր արժէքների երեւոյթներ են Ազգն ու Պետութիւնը», - ամփոփում է նա[73]:

Այսպիսով, շուրջ մեկ դար առաջ հայ ականավոր գործիչ Հովհաննես Քաջազնունին «ազգ»-ի գաղափարն ընկալելիս հիմնականում ընդգծում է արյունակցական, պետական աշխարհագրական, լեզվամշակութային, կենցաղային, պատմական, ինքնագիտակցական բնորոշիչները: Նա առավելաբար շեշտադրում է մշակույթի գործոնը: Այս տեսակետից Քաջազնունին կարեւորում է ազգերի գոյությունը՝ նկատելով, որ ազգերի, ասել է թե մշակույթների բազմազանությունը (ներդաշնակության մեջ իհարկե) հարստացնում է մարդկության ներկան եւ ավելի բեղմանվոր դարձնում ապագան: Հետեւաբար, ազգերի վերացումը պետք է համարել հետադիմական երեւույթ:

Ազգի եւ պետության միջեւ դնելով իր հստակ տարբերակումը՝ Քաջազնունին գտնում է, որ ազգը, որպես պատմամշակութային դաս եւ մշակույթի գործոն, դեռ անհրաժեշտ է մարդկությանը, իսկ պետությունը կպահպանվի այնքան ժամանակ միայն, մինչեւ գտնվի ազգի պահպանման առավել բարձր կարգի քաղաքական կազմակերպություն: Այսօր թերեւս այդպիսի գաղափար կարելի է համարել ազգ-պետություն (natin-state) գաղափարը:

Սակայն քանի դեռ գոյություն ունեն պետական բաժանումները, ազգերը փորձում են իրենց գոյությունը պահպանել դրանց միջոցով, որովհետեւ այլ կերպ չեն կարող ունենալ իրենց տունը եւ հայրենիքը:

72 Տե՛ս անդ, էջ 362:

73 **Յ. Քաջազնունի**, Ազգ եւ հայրենիք, Մատենաշար Զաւարեան Ուսանողական Միութեան, էջ 364: